# ՏՈՂ ԳԻՒՂՈՒՄ ՎԵՐՋԱՊԷՍ ԽԱՂԱՂՈՒԹԻՒՆ Է ՏԻՐՈՒՄ

Հոկտեմբերի 31ին ադրբեջանցի ՕՄՕՆականներից ազատագրուեց Արցախի Հադրութի շրջանի հնագոյն գիւղերից մէկը՝ Տողը, որը Դիզակի մելիքների նստավայրն է եղել: Կանգուն մնացած երկու շքեղ եկեղեցիները՝ Ս. Յովհաննէսն ու Ս. Ստեփանոսը այդ ժամանակների հաստատուն վկայութիւնն են:

Այժմ Տողում ոչ մի ադրբեջանցի չի մնացել: Փաստօրէն, Հադրութի շրջանի ադրբեջանցի բնակչութեան կէսից աւելին ապրում էր Տողի ադրբեջանական մասում: Այստեղ նրանք յայտնուել էին դարասկըզբին:

Այլեւս հայն իր տան մէջ պաշտպանուած է «հարեւան»ների յարձակումներից:

Վերջապէս խաղաղ է այստեղ:





ԻՐ ՀՈՂԻ ՏԷՐԸ